ԱՄՆ–ՀԱՅԱՍՏԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1992-2001 ԹԹ.

ՄԵԼԻՔՅԱՆ Ս. Հ.

1991 թ. անկախություն ձեռք բերելուց ի վեր ԱՄՆ-ի կողմից Հայաստան ուղարկվող օգնությունը տարեցտարի սկսում է աճել: ԱՄՆ-ի կառավարությունը Հայաստանում իր դեսպանատան միջոցով արդյունավետ համագործակցություն է սկսում Հայաստանի նորանկախ հանրապետության կառավարության, մասնավոր սեկտորի, ոչ կառավարական կազմակերպությունների, ամերիկահայ համայնքի և միջազգային այլ դոնոր կազմակերպությունների հետ:

1992-2001 թթ. Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող օգնությունը կարելի է բաժանել երեք փուլերի. 1. 1992-1995 թթ.՝ Մարդասիրական օգնություն, քանի որ այս փուլում Հայաստանի բնակչության համար առաջնային էին սննդամթերքի, վառելանյութի, դեղորայքի և հագուստի ապահովման հարցերը: ԱՄՆ-ի մարդասիրական օգնությունն ուղղված էր դրանց լուծմանը: Հայաստանի Հանրապետությանը 1992-2001 թթ. տրամադրված ամերիկյան մարդասիրական օգնության ծավալը կազմում է 810 մլն ամերիկյան դոլար: Բացի վառելիքի ու ցորենի առաքումից, ԱՄՆ-ը իրականացրել է նաև մարդասիրական օգնության այլ ծրագրեր. 2. 1996-1998 թթ.՝ Զարգացման օգնություն. 3. 1999- 2001 թթ.՝ Մասնավոր սեկտորի զարգացման, ներդրումների ու աշխատատեղերի ստեղծման օգնություն:

Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Մայքլ Ս. Լեմոնի՝ 2001 թ. հունիսի 17-ի ուղերձում ասվում է, որ ՀՀ-ին ամերիկյան օգնությունը նպատակ ունի. «…մասնավոր սեկտորում տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման խթանում, արտասահմանյան ներդրումների ծավալի աճ, Հայաստանի էներգետիկ անվտանգության ամրապնդում, սոցիալական ապահովության համակարգի սատարում, տարածաշրջանային տընտեսական համագործակցության խրախուսում, ժողովրդավարական և դատաիրավական համակարգի բարեփոխումների շարունակում, կրթության վերապատրաստման ծրագրերի ընդլայնում, աջակցություն ինֆորմացիոն տեխնոլոգիաների, զբոսաշրջության և գյուղատնտեսության զարգացմանը, ինչպես նաև աղետի գոտում ծանր սոցիալ-տնտեսական խնդիրների տևական լուծումների որոնում»[1]: Ուղերձում հստակ մատնանշված են այն ոլորտները, որոնց նկատմամբ Միացյալ Նահանգները ցուցաբերում է բացառիկ հետաքրքրություն և անելիքներ, որոնք անհրաժեշտ են Հայաստանի նորանկախ հանրապետության հետագա զարգացման համար:

Հայաստանում ամերիկյան առաքելությունն ընդգրկում է ԱՄՆ-ի կառավարության յոթ գերատեսչություններ: Բոլոր այս գերատեսչությունները (Պետական

[1] Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին 1992-2001 թթ., Ե., 2001, էջ 5:

դեպարտամենտ, Միջազգային զարգացման գործակալություն, Գյուղատնտեսության դեպարտամենտ, Պաշտպանության դեպարտամենտ, Խաղաղության կորպուս, Ֆինանսների դեպարտամենտ, Առևտրի դեպարտամենտ) իրենց մշտական ներկայացուցիչներն ունեն Երևանում: Բացի այդ, ԱՄՆ-ի կառավարության այլ գերատեսչություններ ևս հաճախ այցելում են Հայաստան: Բոլոր այս գերատեսչությունների գործունեությունները համակարգվում են Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի դեսպանի կողմից:

ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը համակարգում է նորանկախ պետություններին ցույց տրվող բոլոր ծրագրային օգնությունները: Հայաստանում հատկապես ակտիվ է համակարգման բաժնի Մարդասիրական ծրագրերի բաժանմունքը: 1992-2001 թթ. Հայաստան ներկրված մարդասիրական օգնության ընդհանուր արժեքը կազմել է 200 մլն ամերիկյան դոլարից մի փոքր ավելի (մազութ, նավթ, դիզելային վառելանյութ, գարնանացանի ու աշնանացանի սերմացու, դեղորայք, բժշկական սարքավորումներ և այլն):

Պետական դեպարտամենտի կրթության և մշակութային հարցերի բաժինը 1992-ին՝ Երևանում ԱՄՆ դեսպանության բացումից ի վեր, ունի իր ներկայացուցչությունը՝ Հրապարակային դիվանագիտության բաժինը, որը կազմակերպում է Միացյալ Նահանգներում կրթական վերապատրաստման և փոխանակման ծրագրեր:

1992 թ. սկսած՝ Հայաստանին օգնություն տրամադրող հիմնական կազմակերպությունը ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունն է, որն իր գրասենյակը Երևանում բացել է 1992 թ.: Իր գործունեության սկզբնական շրջանում գործակալությունը հիմնական շեշտը դնում էր մարդասիրական օգնության վրա: Սակայն 1996-1997 թթ. սկսած՝ անցում է կատարվում զարգացման օգնության և մասնավոր սեկտորի զարգացման ծրագրերին (մասնավոր սեկտորի աճ, էներգետիկ անվտանգություն, սոցիալական ոլորտի ժողովրդավարական բարեփոխումներ, աղետի գոտու վերականգնում, ջրային ռեսուրսների կառավարում և այլն): 1992-2001 թթ. «Ազատության աջակցության ակտ»-ի շրջանակներում ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության կողմից Հայաստանին տրամադրված օգնության ծավալը հասնում է մոտ 600 մլն ամերիկյան դոլարի [2]:

Հայաստանի օգնության ծրագրի մեջ կարևոր դեր է խաղում ԱՄՆ-ի Գյուղատնտեսության դեպարտամենտը, որը ևս իր գործունեությունը Հայաստանում սկսել է 1992 թ.: 1992-2001 թթ. այն Հայաստանին տրամադրել է մոտ 400 մլն դոլարի օգնություն՝ հիմնականում ցորեն, սննդամթերք, գյուղտեխնիկա և այլն: 1996-ին Գյուղատնտեսության դեպարտամենտը սկսել է Մարքեթինգի աջակցության ծրագիրը, որը գյուղատնտեսության մեջ մասնավոր սեկտորի աճի խթանման առումով արդյունավետ է: ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ-ի Գյուղատնտեսության դեպարտամենտի պարենային ծրագրերի միջոցով

[2] Նույն տեղում, էջ 11:

իրագործվում է մասնավոր կամավորական կազմակերպությունների կողմից Հայաստանի սոցիալապես անապահով խավերին սննդամթերքի մատակարարում:

1995 թ. Երևանում բացվեց Պաշտպանության դեպարտամենտի ռազմական կցորդի գրասենյակը: Պաշտպանության դեպարտամենտի «Հավելյալ նյութերի» ծրագրի շրջանակներում զգալի մարդասիրական օգնություն է տրամադրվել Հայաստանին: Մասնավորապես, 1996 թ. օգոստոսին տրամադրվել են 15 մլն ամերիկյան դոլարի բժշկական սարքավորումներ ու պարագաներ[3]: Բացի այդ, ԱՄՆ-ի և Գերմանիայի ֆինանսավորմամբ պաշտպանության ոլորտի 51 հայ մասնագետ է վերապատրաստման ուղարկվել Գերմանիայի Գարմիշ քաղաքում գտնվող Ջորջ Մարշալի անվան Անվտանգության ուսումնական կենտրոն: Ռազմական կցորդի գրասենյակը նաև օգնում է Հայաստանին ընդլայնելու մասնակցությունը ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին: Պետական դեպարտամենտի՝ նորանկախ պետություններին ԱՄՆ-ի օգնության համակարգման բաժնի կողմից կառավարվող այդ ծրագրի շրջանակներում ռազմական ու բժշկական բնագավառի 40 ամերիկացի մասնագետներ երկու ամիս աշխատել են Երևանում: Նրանք կազմակերպում էին 240 բեռնարկղերի ընդունումը, բժշկական պարագաներ ու սարքավորումներ բաշխում ծրագրին մասնակցող ութ բուժհիմնարկներին, տեղադրում ստացած սարքավորումները և տեխնիկապես վերապատրաստում այդ հիմնարկների աշխատակիցներին:

1992-2001 թթ. Հայաստանում ակտիվ կամավորական ծրագրեր է իրականացնում նաև Խաղաղության կորպուսը, որի կամավորական խմբերը, բնակվելով Հայաստանի տարբեր մարզերում, կազմակերպում են ամենատարբեր բնագավառների դասընթացներ՝ խթանելով բիզնեսի զարգացումն ու անգլերենի տարածումը:

ԱՄՆ-ի կառավարության կողմից Հայաստանում իրականացվող համապարփակ տնտեսական բարեփոխումների ծրագրի անբաժան մասն է կազմում ԱՄՆ-ի Ֆինանսների դեպարտամենտի փորձագիտական օգնության ծրագիրը, որի Տեխնիկական օգնության բաժինը Թմրանյութերի դեմ միջազգային պայքարի և իրավապահ հարցերի բաժնի հետ համակարգում է Հայաստանի իրավապահ մարմիններին օգնության ծրագիրը:

1993 թ. սեպտեմբերին, որպես ԱՄՆ-ի առաքելության մաս, Երևանում հաստատվում է ԱՄՆ-ի Առևտրի դեպարտամենտը՝ ներկայացնելով նորանկախ պետությունների բիզնեսի տեղեկատվական ծառայությունը: Այն Հայաստանում առևտրի, հնարավոր ներդրումների, զարգացող ոլորտների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օրենքների ու կանոնների փոփոխությունների մասին տեղեկատվություն է հավաքում և տրամադրում ԱՄՆ-ի կառավարությանը: Առևտրի դեպարտամենտն իրականացնում է նաև *SABIT* ծրագիրը, որի շրջանակներում Հայաստանի մասնավոր սեկտորի և կառավարության մասնագետները Միացյալ Նահանգներում վերապատրաստման հնարավորություն են ստանում:

---

[3] Նույն տեղում, էջ 12:

Օգնության ծրագրեր իրականացնող այլ գերատեսչությունների շարքին է պատկանում Էներգետիկայի դեպարտամենտը, որը Հայաստանում ակտիվորեն աշխատում է 1995 թ. նոյեմբերին Մեծամորի ատոմակայանի վերաբացումից ի վեր:

1994 թ. սկսած՝ ԱՄՆ-ի կառավարությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ Հայաստան է տեղափոխել 35.000 տոննա սերմացու՝ հիմնականում ցորեն, գարի և կարտոֆիլ: Մոտ 3 միլիոն դոլար արժողությամբ մարդասիրական ծրագրի հետևանքով իջել է սերմացուի գինը, և յուրաքանչյուր նոր ցանքի ժամանակ օգտագործվել է բարձրորակ սերմացու: Ծրագիրն օգնել է նաև հաղթահարելու պարբերական երաշտի հետևանքներն ու զգալիորեն նպաստել է Հայաստանում գյուղատնտեսական ապրանքների արտադրության ծավալների աճին: Միայն այս ծրագրի շրջանակներում Հայաստանը ստացել է 1991-2001 թթ. ներկրված սերմացուի ճնշող մեծամասնությունը:

1996-1998 թթ. ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության հովանավորությամբ «Փարոս» ծրագիրը համակարգչի միջոցով հաշվառել և ըստ անապահովության աստիճանի՝ դասակարգել է մոտ 750.000 ընտանիք: Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությունը, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը, միջազգային կազմակերպություններն ու մասնավոր կամավորական կազմակերպություններն օգտագործում են «Փարոսի» համակարգը՝ որոշելու, թե որոնք են մարդասիրական օգնության կարիք ունեցող ամենաանապահով ընտանիքները:

Քննվող ժամանակաշրջանում մարդասիրական վերջին ծրագրերից մեկը (5 մլն ամերիկյան դոլար արժեքով) 2000-2001 թթ. ձմռանը նախաձեռնել ու իրականացրել է ԱՄՆ-ի դեսպանությունը՝ 2000 թ. երաշտի հետևանքները վերացնելու համար: Այդ ծրագիրը բաղկացած էր հինգ մասից. 1. աշնանացանի ցորենի սերմացուի բաշխում, որի շրջանակներում 1.740 տոննա աշնանացանի ցորենի սերմացու է գնվել և բաժանվել 12.000 անհատ գյուղացիների՝ 2000-ի աշնանը ցանելու համար. 2. լրացուցիչ անասնակերի ծրագիր, որի շրջանակներում 6.300 տոննա անասնակեր է գնվել, ներմուծվել և բաժանվել 60.000 անհատ գյուղացիների. 3. յոթ նոր ջրհորների կառուցում և երկու հին ջրհորների վերանորոգում՝ նախկինում ջրի պակաս ունեցող տարածքները խիստ անհրաժեշտ ոռոգման ջրով ապահովելու համար. 4. 2001 թ. գարնանացանի համար 8.000 տոննա գարու սերմացուի փոխադրում և բաշխում. 5. 2.4 մլն ամերիկյան դոլարի տրամադրում Պարենի համաշխարհային ծրագրին՝ 2000-ի նոյեմբերից մինչև 2001-ի մայիս ամենակարիքավոր անհատ գյուղացիներին սննդամթերքով ապահովելու համար:

Այսպիսով, 1992-2001 թթ. ԱՄՆ-ի կառավարության բոլոր գերատեսչությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված ընդհանուր օգնության ծավալը հասնում է մոտ 1,4 մլրդ ամերիկյան դոլարի:

ПРОГРАММЫ ПОМОЩИ США АРМЕНИИ В 1992-2001 ГГ.

МЕЛИКЯН С. Г.

Резюме

После провозглашения независимости Армении между США и Арменией началось плодотворное сотрудничество в сфере частного сектора РА, а также с неправительственными организациями, армяно-американской диаспорой и другими международными донорскими организациями, предоставлявшими помощь Армянской республике. Эта помощь охватывала три этапа: с 1992 по 1995 гг., с 1996 по 1998 гг. и с 1999 г. по 2001 год.

В миссии США в Армении принимают участие семь ведомств правительства США, имеющих свои представительства в Армении. Деятельность этих ведомств координирует посол США в Армении. С 1992 по 2001 гг. весь объем помощи, предоставленной всеми ведомствами США, достиг 1,4 млрд долларов.